



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 27 ՄԱՐՏ, 2017

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 49

ՄԱՀՈՒԱՆ ՈՒ ՓՈՒՃ ՀԱՐՄՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Լսեցէք, դուք՝ բոլոր ժողովուրդներ, ականջ փուէք, դուք՝ բնակիչներ ամբողջ աշխարհի. բոլորդ անխտիր՝ ռամիկներ ու մեծամեծներ, հարուստներ ու աղքատներ: Ինչ որ Կիսի ըսեմ՝ իմաստութիւն է, սիրպեա բղիսած խորհուրդները՝ ողջմտութիւն: Ես վախ չեմ գգար՝ երբ չար օրեր կու գան, եւ նենգաւոր թշնամիներ ամէն կողմէ կը պաշարեն զիս. մարդիկ՝ որոնք իրենց սպացուածքներուն կը վարահին, իրենց մեծամեծ հարստութեամբ կը պարծենան: Արդարեւ, հարստութիւնը չի կրնար մարդս փրկել, չի կրնար կեանք գնել Աստուծմէ. որովհետեւ մարդուս կեանքը շար թանկագին է, եւ ոեւէ փրկանք բաւարար չէ՝ անոր անվախճան կեանք պարգեւելու, մահուան ձեռքէն ազատելու: Կը փեսնես՝ թէ իմաստունն ալ կը մեռնի, յիմարն ու անմիտն ալ կը կորսուին, ուրիշներուն ձգելով իրենց սպացուածքները: Ինչքան ալ շար հողեր ունենան իրենց անունով՝ գերեզմանը կը դառնայ անոնց մնայուն փունը, անոնց բնակարանը՝ բոլոր ժամանակներուն: Այն մարդը որ չի հասկնար իրեն փրուած պարիւր, կը նմանի անբան անասուններուն, որոնք ի սպառ կը կորսուին: Այս է վախճանը անոնց անմիտ ինքնավստահութեան, այս է վերջը անոնց ինքնագոհութեան: Իրար մի՛ անցնիր երբոր մէկը կը հարստանայ, երբոր բազմապարկուին անոր փունին ինչքերը. որովհետեւ երբոր մեռնի՝ ոեւէ բան հետը Կիսի չբանի, ունեցուածքը իրեն հետ գերեզման Կիսի չիջնէ: Թէպէտ իր կենդանութեան ինքզինք երջանիկ կը համարէ, եւ կը գովուի իր ունեցած յաջողութիւններով, բայց ինք եւս իր հայրերուն պէս Կիսի երթայ խաւար աշխարհը, ուր լոյս Կիսի չբեսնէ յաւեր: Այն մարդը որ չի հասկնար իրեն փրուած պարիւր, կը նմանի անբան անասուններուն, որոնք ի սպառ կը կորսուին:

ՆԱՐԱԿԱՆ- ԱՐԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ թո՛ղ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ թո՛ղ արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԻԹԸ



ՅԱԿՈԲՈՍ ՏԵԱՌՆԵՂԲՕՐ
ԸՆԴՆԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

5:1-6

ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՀԱՐՈՒՍՆԵՐՈՒՄ (5:1-6)

Հերաբրբրական է որ Քրիստոնեական հաւաքը կու գայ մարդուս փալու դիպելու նոր եղանակ մը, նոր աշխարհահայեացք մը, ուր կը սկսինք ըստ այնմ դիպել եւ արժեւորել երեւոյթներ, վիճակներ, ըլլան անոնք բարոյական, ընկերային կամ ընկրանեկան հարցերուն կապակցաբար: Ահա այդ երեւոյթներէն մէկն է նաեւ աղքատութեան կամ հարստութեան պարագան, ուր Յակոբոս Առաքեալ շարունակելով իր նամակը պիտի խօսի այդ մասին նկատի ունենալով հարստութիւնն ու հարուստները:

Այնպէս ինչպէս մեղաւորներու ու երկմիտներու պարագային Յակոբոս Առաքեալ կ'ըսէր. «**սգացէք ու լացէք. ծիծաղելու փեղ՝ սգացէք, ուրախանալու փեղ՝ փրփմեցէք**» (4:9), նոյն արտայայտութիւնը կ'ընէ Յակոբոս Առաքեալ հարուստներուն ըսելով. «**Լացէք ու ցաւագին կերպով ողբացէք այն դժբախտութիւններուն համար որ ձեր գլխուն պիտի գան**» (5:1): Նախապէս ալ ըսուեցաւ, որ Յակոբոս Առաքեալի նամակը, ու անոր ուսուցումները Քրիստոսի ուսուցմներն են: Հերեւաբար, այս հարուստը եւս, որ գգուշացում մըն է հարուստներուն անոր արմարը կ'երթայ մինչեւ Քրիստոսի ուսուցումները: Առիթով մը Քրիստոս Ինք եւս պիտի ըսէր այս երկրի վրայ գանձեր մի դիզէք, ուր գողերը կը գողնան, ցեցը կ'ապականէ, այլ՝ երկինքի մէջ գանձեր դիզեցէք (Մտթ 6:19): Որքան դիւրին է պարանը ասեղի ծակէն անցնիլը, քան հարուստը արքայութիւն մտնելը (Մտթ 19:16-30): Այնպէս կը թուի թէ Քրիստոս ընդհանրապէս դէմ է հարուստներուն ու հասարակութեան: Քրիստոս ընդհանրապէս դէմ է անոր սխալ գործածութեան, երբ անձը գերին կը դառնայ մամոնային, փոխանակ այդ բոլորը ծառայեցնելու Աստուծոյ փառքին:

Նոյն երեւոյթին փարբեր պատկերն է, ինչ որ Առաքեալը ներկայացուց 4:13-17 հարուստին մէջ, երբ կ'անդրադառնար թէ «**վաղուան վրայ յոյս մի դնէք**», նոյնպէս ալ՝ «**ձեր հարստութեան վրայ յոյս մի՛ դնէք**»: Որովհետեւ եթէ երբեք վաղը անորոշ է, չենք գիտեր, եւ մերը չէ: Նոյնպէս ալ հարստութիւնը որ ունինք մերը չէ, այլ փորութիւն է, ցեցերու կերակուր է եւ ժանգ է: Առաքեալը դէմ է հարուստին, ոչ թէ անոր հարուստ ըլլալուն, այլ՝ բանուորին իրաւունքը գրկելուն, եւ ըստ այնմ իրենց կեանքը հաճոյքներով ու գուարճութեամբ անցնելուն: Այլ խօսքով՝ իրենց անձնական շահերուն ու ծրագիրներուն համար արդարին իրաւունքը գրկելուն: Պէտք չէ մոռնալ բնաւ, որ այդ հարստութիւնները ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ բարիքը, որ կու փայ մարդուն, որպէսզի մարդն ալ իր նմանին փայ: Այնպէս ինչպէս յիշեցուց Տէրը Իսրայելին երբ անոնք անապարի թափառումներու ընթացքին կ'ուղղուէին դէպի խոստացուած երկիր, ըսելով. «**Օտարականին ու որբին իրաւունքը մի՛ ծռեր ու որբեայրիին հանդերձը գրաւ մի՛ առնէր: Միտքդ բեր թէ դուն ալ Եգիպտոսի մէջ ծառայ էիր ու քու Տէր Աստուածդ քեզ անկէ ազատեց**» (Բ օրինաց 24:17): Ուրեմն չըլլայ թէ այդ բոլորը մոռնանք, եւ սխալ գործածութիւնը հարստութեան մեզի համար ըլլայ դատապարտութիւն: Ահա մեր հարստութեան ապահովութիւնը մեզ կը հեռացնէ Քրիստոսէն, փոխանակ զինք ունենալու իբրեւ մեր ապահովութիւնը:

Մէկ այլ ուրիշ երես մը: Երբ Յակոբոս Առաքեալ խիստ ոճ կ'օգտագործէ հարուստներուն նկատմամբ, այդ մէկը կարծէք ձեռով մը իր ուկնդիրներուն ցոյց փալու թէ չվարահին հարստութիւն կոչուածին, չնախանձին հարուստներուն եւ չփորձեն ունենալ այն ինչ որ ուրիշներ ունին: Ընդհակառակը, հարուստները, ովքեր կ'իրաւագրկեն ու կը սպաննեն արդարը, եւ մի գուցէ ժամանակաւորապէս կ'ապրին ուրախութեան ու գուարճութեան մէջ, բայց պէտք է որ սգան ու ողբան այն դժբախտութիւններուն համար որ իրենց գլխուն պիտի գայ: Այս բոլորը ցոյց կու փան, անոնց համար, ովքեր կը փորձեն իրենք զիրենք ապահով զգալ իրենց հարստութեամբ: Այստեղ նաեւ հարուստները անոնք են, ովքեր հաւատացեալները չեն: Որովհետեւ նախ ճշմարիտ հաւատացեալը, որ եթէ հարուստ է փալ գիտէ, ինչպէս Զակքէոսի օրինակը, երբ Քրիստոս անոր փունը մտաւ, այսպէս պատասխանեց. «*Տէր, ահա ունեցածիս կէտը աղքատներուն պիտի փամ եւ եթէ ոեւէ մէկը անիրաւած եմ՝ քառապարիկ պիտի հարուցանեմ անոր*» (Ղուկ 19:8): Միւս կողմէ, երբ Յակոբոս կ'արտայայտուի երբ չի նշեր որպէս հաւատացեալներ, որովհետեւ ըստ իր նամակին, ամէն անգամ երբ իր խօսքը հաւատացեալներուն կ'ուղղէ այսպէս կ'ըսէ. «*եղբայրներ, աղքատ եղբայրը, սիրելի եղբայրներս, համբերող եղէք եղբայրներ*»,

մինչ երբ խօսքը հաւաքացեալներուն չէ, ուղղակի կ'արտայայտուի ըսելով. «անհաւաքարիմ մարդիկ, հարուստներ»: Մինչ երբ հաւաքացեալ հարուստ եղողը ուրախ ըլլայ, երբ Աստուած զինք խոնարհեցնէ: Մինչ այսպէս դարապարտութիւն կայ, անոր որ հարստութիւն կը դիզէ, ու միայն այդ մասին կը մտածէ, այնպէս ինչպէս որ էր պարագան Անանիայի ու Սափիրայի, կամ Յուդային: Ուրեմն զգուշացու՛մ է բոլոր անոնց, որոնք սխալ ձեռով կ'օգտագործեն հարստութիւնը:

1. Աստուածաշունչը երբեք ալ դէմ չէ հարստութեան, օրինակ՝ Յոբի պարագան, երբ բոլոր նեղութիւններու աւարտին Տէրը օրհնեց Յոբը եւ իրեն փուռ կրկնակի հարստութիւնը: Որուն մասն կ'անդրադառնայ Յակոբոս Առաքեալ (5:11): ինչո՞ւ: Որովհետեւ Աստուած գթառասպ է ողորմած է:
2. Աստուածաշունչը կը զգուցանէ գալիք փորձութիւններէն, որ հարուստը կրնայ ունենալ՝ հպարտութիւն, սխալ ապահովութիւն, ուրիշները հակակշռի փակ առնել (Ա Տիմոթ 6:17-19):
3. Աստուածապաշտութիւնը եւ Աստուծով բաւարար ըլլալը եւ ունեցածով գոհանալ գիտցողը լաւագոյն փարբերակն է (Ա Տիմոթ 6:6): Ունցածով գոհանալը, որ հակառակն է ազահութեան, ընչազաղցութեան, որ կռապաշտութեան մէկ փարբերակն է, իսկ կռապաշտութիւնը մեղք է: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Կը բաւարարուինք եթէ ուրելիք եւ հագուելիք ունինք: Իսկ անոնք որ հարստանալ կ'ուզեն՝ փորձութեան եւ թակարդի մէջ կ'ինան: Կը բռնուին շար մը անմիտ ու վնասակար ցանկութիւններով, որոնք մարդիկը մահուան եւ կորուստի անդունդը կը գորեն: որովհետեւ բոլոր չարիքներու արմատը դրամասիրութիւնն է: Շարքեր դրամ դիզելու ձգտելով՝ հաւաքէն շեղեցան եւ իրենք զիրենք փաշտեցին բազմաթիւ ցաւերով» (Ա Տիմոթ 6:8-10):
4. Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ հարստութիւնը Աստուծոյ բարութեան արտայայտութիւնն է, ինչպէս որ կրկնակի հարստացուց Յոբը: Աստուած առաքօրէն կու փայ, որպէսզի վայելենք (Ա Տիմոթ 6:17), անոր դիմաց շնորհակալութիւն յայտնելու Աստուծոյ: Ուրեմն զգոյշ, եթէ երբեք չհասկցանք այս բոլորի նպատակը, Աստուած այդ բոլորը ետ կ'առնէ, որպէսզի կարենանք զԻնք վայելել, եւ ոչ թէ հարստութիւնը: Որովհետեւ մեր միակ ուրախութիւնն ու վայելքը Տէրը պէք է ըլլայ եւ ոչ թէ Իր փուռ հարստութիւնը:
5. Աստուածաշունչը կը սորվեցնէ որ պարասխանատութիւն կայ հարստութեան հետ կապուած: Բարիք ընելու, լաւ գործերով հարստանալու, առաքաձեռն ըլլալու, սիրալիր եւ ուրիշներուն օգնելու (Ա Տիմոթ 6:18-19):
6. Աստուածաշունչը կը սորվեցնէ որ դժուար է բայց անկարելի չէ, որ հարուստը արքայութիւնը ժառանգէ:
7. Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ Աստուած հաւասար չէ բաժնած շնորհները: Այլ փարբերութիւններ կան ֆիզիքապէս, նիւթապէս, հոգեւորապէս եւ մտապէս: Այս երեւոյթը, որպէսզի անով ունեցողը կարենայ չունեցողին փալու եւ բարիք գործելու: Միայն մեր մասին չմտածելու, այլ նաեւ ուրիշին: Սա կը նշանակէ, որ այս մեղաւոր ու անկեալ աշխարհին մէջ աղքատութիւնը, անհաւասարութիւնը մաս եւ բաժին է, անխուսափելիօրէն:
8. Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ Աստուած յարուկ յոգածութիւնը կը ցուցաբերէ աղքատին (Սաղմոս 68:5, Ղեւրացւոց 19:10):
9. Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ Աստուծոյ ժողովուրդն ալ նոյնպէս յոգածութիւնը ցուցաբերէ աղքատին նկատմամբ (Յակոբոս 1:27):
10. Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ Աստուծոյ դարաստանը Իր ժողովուրդին վրայ պիտի գայ, որովհետեւ աղքատը գրկեցին (Ամովս 2:6):
11. Աստուածաշունչը կը զգուշացնէ զարողութիւնը ընելէ, անոնց որոնք նիւթապէս կամ դիրքով փարբեր են, եւ արիկա մեղք է (Յակոբոս 2): «երբեք մարդոց միջեւ խարտութիւն մի՛ դնէք» (2:1):

Ուրեմն, մենք ալ մտածենք այն բարիքներուն մասին, որոնք կը փրուին Աստուծոյ կողմէ, որքանով այդ բոլորը կը կիսենք անոնց հետ որոնք չունին: մտածենք որ այդ բարիքները ճիշդ այդ նպատակին համար է որ կը փրուին մեզի: